https://doi.org/10.46991/hc.2025.si1.041

The Masonic Activities of the First Rector of Yerevan State University Y.S. Ghambaryan

Felix Movsisyan
https://orcid.org/0000-0001-7576-9672
Vanadzor State University, Professor at the Chair of History, PhD
felmov@mail.ru

Keywords - Y.S. Ghambaryan, M.M. Kovalevsky, Russia, Lodge, Freemason, "Cosmos", "Polar Star", "Phoenix", "Revival".

The Masonic activities of Yuri Stepan Ghambaryan (Ghambarov), the first rector of Yerevan State University, hasn't been fully studied by Armenian historiography. The fact of his becoming a freemason and his activities were closely related to M.M. Kovalevski who was a famous Russian historian, jurist, sociologist, ethnographer, public and political figure.

On May 16, 1905, in Paris Lodge No.288, under the guidance of M.M. Kovalevski, Y.S. Ghambaryan was ordained a First Degree Mason, On January 30, 1906, he was ordained a Second and then a Third Degree Mason in the "Cosmos" Lodge No.288, which rarely happened in freemasonry. He remained a member of that lodge until 1908, although he returned to Petersburg in August, 1906.

On November, 1906, M.M. Kovalevsky founded the first lodge of Russian Political freemasonry "Polar Star" in Petersburg and Y.S. Ghambaryan joined it at the beginning of 1907. In 1906 in Petersburg Ghambaryan became one of the five main members of the "Phoenix" Lodge founded by Kovalevsky.

On May 8, 1908, M.M. Kovalevsky, Y.S. Ghambaryan and their associates left the "Polar Star" Lodge because of disagreements with the leaders of the Moscow "Liberation" Lodge and founded their own "Cosmos" Lodge which didn't function for long.

In summer 1912, Y.S. Ghambaryan became a member of the masonic organization "Great East of the Peoples of Russia" in Moscow. During the period of politicization of Freemasonry in Russia, Y.S. Ghambaryan wasn't active in masonic activities, as far as he wasn't a member of any political party and wasn't engaged in politics either. From that moment until the end of his life, he was engaged exclusively in professional and scientific activities.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 41-54.

Received: 01.11.2024
Revised: 04.12.2024
Accepted: 15.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author[s] 2025

ԵՊՀ առաջին ռեկտոր Յ.Ս. Ղամբարյանի մասոնական գործունեությունը

Ֆելիքս Մովսիսյան
Վանաձորի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ.

Բանալի բառեր - Յ.Ս. Ղամբարյան, Մ.Մ. Կովալևսկի, Ռուսաստան, օթյակ, մասոն, «Կոսմոս», «Բևեռային աստղ», «Ֆենիքս», «Վերածնունդ»:

Երևանի պետական համալսարանի առաջին ռեկտոր Յուրի Ստեփանի Ղամբարյանի (Ղամբարովի) մասոնական գործունեությունը հայ պատմագիտության կողմից մինչ օրս հիմնավոր ուսումնասիրված չէ: Նրա ազատ որմնադիր դառնալու իրողությունը և մասոնական գործունեությունն անխզելիորեն կապված է ռուս նշանավոր պատմաբան, իրավագետ, սոցիոլոգ, ազգագրագետ, հասարակական և քաղաքական գործիչ Մ.Մ. Կովալևսկու անվան հետ:

1905 թ. մայիսի 16-ին Փարիզի «Կոսմոս» № 288 օթյակում, Մ.Մ. Կովալևսկու ղեկավարությամբ, Յ.Ս. Ղամբարյանը ձեռնադրվեց առաջին աստիճանի մասոն: 1906 թ. հունվարի 30-ին նա «Կոսմոս» № 288 օթյակում ձեռնադրվեց նախ՝ երկրորդ, ապա երրորդ աստիճանի ազատ որմնադիր, որը մասոնությունում հազվադեպ է տեղի ունենում: Մինչև 1908 թ. նա մնաց այս օթյակի անդամ, թեև 1906 թ. օգոստոսին վերադարձել էր Պետերբուրգ:

1906 թ. նոյեմբերի 15-ին Մ.Մ. Կովալևսկին Պետերբուրգում հիմնեց ռուսական քաղաքական մասոնության առաջին օթյակը՝ «Բևեռային աստղը», որին 1907 թ սկզբին անդամագրվեց Յ.Ս. Ղամբարյանը: 1906 թ. Պետերբուրգում Յ.Ս. Ղամբարյանը դարձավ Մ.Մ. Կովալևսկու նախաձեռնությամբ հիմնված «Ֆենիքս» օթյակի 5 հիմնադիր անդամներից մեկը: 1908 թ. փետրվարի 17-ին Մոսկվայում Մ.Մ. Կովալևսկու հիմնած «Վերածնունդ» օթյակի հիմնադիր անդամներից մեկը Յ. Ս. Ղամբարյանն էր:

1908 թ. մայիսի 8-ին Մ.Մ. Կովալևսկին, Յ.Ս. Ղամբարյանը և նրանց համախոհները Մոսկվայի «Ազատագրում» օթյակի ղեկավարների հետ ունեցած տարաձայնությունների պատճառով հեռացան «Բևեռային աստղ» օթյակից և հիմնեցին իրենց «Կոսմոս» օթյակը, որը երկար չգործեց:

1912 թ. ամռանը Յ.Ս. Ղամբարյանն անդամագրվեց Մոսկվայում հիմնված «Ռուսաստանի ժողովուրդների Մեծ Արևելք» մասոնական կազմակերպությանը:

Ռուսաստանում մասոնության քաղաքականացման և կուսակցականացման տարիներին Յ.Ս. Ղամբարյանը մասոնական ակտիվ գործունեություն չծավալեց, որովհետև որևէ քաղաքական կուսակցության անդամ չէր և քաղաքականությամբ չէր զբաղվում: Այդ պահից սկսած մինչև իր կյանքի վերջը նա զբաղվում էր բացառապես պրոֆեսորա-դասախոսական և գիտական գործունեությամբ:

Масонская деятельность первого ректора ЕГУ Ю. С. Гамбаряна

Феликс Мовсисян
Ванадзорский государственный университет, профессор кафедры История Армении, д.и.н.

Ключевые слова - Ю. С. Гамбарян, М.М. Ковалевский, Россия, ложа, масонство, «Космос», «Полярная звезда», «Феникс», «Возрождение».

Масонская деятельность первого ректора Ереванского государственного университета Юрия Степановича Гамбаряна (Гамбарова) по сей день в армянской историографии не изучена. Его принадлежность к вольным каменщикам и масонская деятельность неразрывно связаны с именем выдающегося российского историка, юриста, социолога, этнографа, общественного и политического деятеля М. М. Ковалевского. 16 мая 1905 года в парижской ложе «Космос» № 288 под руководством М. М. Ковалевского Ю. С. Гамбарян был посвещен в масоны первой степени. 30 января 1906 года в ложе «Космос» № 288 он был посвещен сначала в вольного каменщика второй, а затем третьей степени, что редко встречается в масонстве. До 1908 г. он оставался членом этой ложи, хотя в августе 1906 г. вернулся в Петербург. 15 ноября 1906 г. М. М. Ковалевский учредил в Петербурге первую ложу российского политического масонства «Полярная звезда», членом которой в начале 1907 г. стал Ю. С. Гамбарян. В 1906 г. в Петербурге Ю. С. Гамбарян стал одним из 5 членов-основателей ложи «Феникс», созданной по инициативе М. М. Ковалевского. Одним из членов-основателей ложи «Возрождение», основанной М. М. Ковалевским в Москве 17 февраля 1908 г., также был Ю. С. Гамбарян. 8 мая 1908 г. М. М. Ковалевский, Ю. С. Гамбарян и их единомышленники покинули ложу «Полярная звезда» из-за разногласий с руководителями московской ложи «Освобождение» и основали свою ложу «Космос», которая просуществовала недолго. Летом 1912 г. Ю. С. Гамбарян вступил в масонскую организацию «Великий Восток народов России», созданная в Москве. В годы политизации и

партийной активизации масонства в России Ю. С. Гамбарян не развернул активную масонскую деятельность, потому что не был членом какой-либо политической партии и не занимался политикой. С этого времени и до конца своей жизни он занимался исключительно преподавательской и научной деятельностью.

* * *

Մուտք: Երևանի պետական համալսարանի առաջին ռեկտոր, անվանի գիտնական, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, գիտության և կրթության հմուտ կազմակերպիչ Յուրի Ստեփանի Ղամբարյանի (Ղամբարով) կյանքը, գիտական, պրոֆեսորա-դասախոսական գործունեությունը հայ պատմագիտության կողմից առ այսօր հավուր պատշաճի ուսումնասիրված, արժևորված և գնահատված չէ: Նրա կյանքի ու գործունեության ուշագրավ բազմաթիվ դրվագներ մեզ հայտնի չեն, չի պահպանվել անգամ նրա անձնական արխիվը: Ուսումնասիրված չէ նաև Յ.Ս. Ղամբարյանի մասոնական գործունեությունը: Սույն հոդվածն այդ առումով առաջինն է և նպատակ է հետապնդում մասամբ լրացնել այդ բացը:

Յ.Ս. Ղամբարյանի կյանքը և պրոֆեսորա-դասախոսական գործունեությունը: Յ.Ս. Ղամբարյանը ծնվել է 1850 թ. հունիսի 10 (22)-ին Թիֆլիսում: Նրա հայը՝ Ստեփան Պավելի Ղամբարովը, Թիֆլիսի նահանգային դատախազ էր, բարեխիղճ ծառայության համար պարգևատրվել էր Սուրբ Աննայի երկրորդ և Սուրբ Վլադիմիրի երրորդ աստիճանի շքանշաններով, իսկ 1860 թ. դեկտեմբերի 25-ին արժանացել էր քաղաքացիական չորրորդ դասի պետական խորհրդականի աստիճանի [Список гражданским чинам 4-ого класса, 1863, 602]:

1866 թ. Յ.Ս. Ղամբարյանը բարձր առաջադիմությամբ ավարտել է Թիֆլիսի տղամարդկանց առաջին գիմնազիան, իսկ 1870 թ՝. Մոսկվայի կայսերական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 1870-1873 թթ. նա աշխատել է Թիֆլիսի դատական պալատում որպես դատական քննիչ, իսկ 1873-1874 թթ. գիտելիքները հարստացնելու նպատակով մեկնել է Եվրոպա, եղել Ավստրո-Հունգարիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Շվեյցարիայում:

1880 թ. հունիսին Յ.Ս. Ղամբարյանը Մոսկվայի կայսերական համալսարանում պաշտպանել է մագիստրոսական ատենախոսություն՝ «Կամավոր և անհատույց գործունեությունը ուրիշի շահում» թեմայով: 1880 թ. հոկտեմբերին նա ընտրվել է Օդեսայի Նովոռոսիյսկյան համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ: 1884 թ. հուլիսին Յ.Ս. Ղամբարյանը դասախոսական աշխատանքի է անցել Մոսկվայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, սկզբում՝ որպես դոցենտ, իսկ 1884 թ. դեկտեմբերից՝ քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության

ամբիոնի արտահաստիքային պրոֆեսոր [Императорский Московский университет 1755-1917, 2010, 144-145]:

Համալսարանում դասավանդելու ընթացքում Յ.Ս. Ղամբարյանը ծանոթացել և մտերմացել է իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Մաքսիմ Մաքսիմովիչ Կովալևսկու (1851-1916) հետ, որը շարունակվել է երկար տարիներ: Նրանք գրեթե հասակակից էին, սերում էին ազնվականի ընտանիքից, մասնագիտությամբ իրավաբան էին, բարձրագույն կրթություն էին ստացել նաև եվրոպական երկրներում և միասին դասավանդում էին Մոսկվայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետում: Մ.Մ. Կովալևսկու տանը յուրաքանչյուր հինգշաբթի հավաքվում էին իր մտերիմները և Պետերբուրգի մտավորականության ընտրանին ու տարբեր թեմաների շուրջ քննարկումներ անցկացնում, որոնց մշտապես մասնակցում էր նաև Յ.Ս. Ղամբարյանը [Ковалевский, 2005, 10]: Մ.Մ. Կովալևսկին իր հիշողություններում գրում է, որ Եվրոպայից վերադառնալուց հետո մտերմացել է երկու մարդկանց հետ, ովքեր «մինչ օրս մնում են իմ բարեկամները»: Նրանցից մեկը պրոֆեսոր Ի.Ի. Իվանյուկովն էր, իսկ մյուսը « ...մռայլ էր ու միայնակ: Մռայլությունը նրան ստիպում էր մի կողմ քաշվել հասարակությունից, իսկ մենակությունը՝ շատ աշխատել ինքնազարգացման համար: Ես նկատի ունեմ Ղամբարովին: Նա մեր ամենակրթված իրավաբաններից մեկն է» [Ковалевский, 2005, 231]:

1887 թ. Մ.Մ. Կովալևսկին և Յ.Ս. Ղամբարյանը միասին ազգագրական արշավախումբ են կազմակերպել Կովկասում՝ տոհմային հարաբերություններն ուսումնասիրելու նպատակով, որի նյութերը Մ.Մ. Կովալևսկին հրատարակել է առանձին ժողովածուի տեսքով [Ковалевский, 2005, 12]: 1887 թ. հունիսի 6-ին Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար Ի.Դ. Դելյանովի հրամանով Մ.Մ. Կովալևսկին հեռացվել է համալսարանից իր դասախոսություններում «ռուսական պետական կարգի նկատմամբ բացասական վերաբերմունք արտահայտելու պատճառով» և սահմանադրական գաղափարներ քարոզելու համար [Сватиков Сергей, Голос минувшего, 02.1917, 2, 35-48]: Մ.Մ. Կովալևսկու՝ Փարիզ վտարանդվելուց հետո նրա կապը Յ.Ս. Ղամբարյանի հետ չի ընդհատվել: 1894 թ. նոյեմբերին նա իր մտերիմներից պրոֆեսոր Ա.Ի. Չուպրովին խնդրել է լույս տեսած իր գրքի մի օրինակը տալ «իր ընկեր Յ. Ս. Ղամբարովին և Գրիգորի Ավետի Ջանիշևին» [ЦГИАМ. Ф. 2244. Оп. 1. Д. 1706. Л. 21-22], ով «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի հրատարակիչ-խմբագիրն էր:

Մոսկվայի համալսարանում դասախոսական գործունեությանը զուգահեռ Յ.Ս. Ղամբարյանը շարունակել է գիտական ուսումնասիրությունները քաղաքացիական իրավունքի ոլորտում: 1889 թ. նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հասարակական շահը քաղաքացիական իրավունքում» թեմայով և ստացել

իրավագիտության դոկտորի գիտական աստիճան: 1899 թ. ամռանը Յ.Ս. Ղամբարյանը Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար Ն.Պ. Բոգոլեպովի պահանջով հարկադրված լքել է համալսարանը՝ մեղադրվելով հայկական շարժում և հակապետական քարոզչություն ծավալելու մեջ [Волков, Куликова, Логинов, 2006, 58]: Այդ մասին Մոսկվայի ուսումնական շրջանի հոգաբարձու, գաղտնի խորհրդական կոմս Պ.Ա. Կապնիստը ռուսական իշխանություններին 1890 թ. դեկտեմբերի 23-ին ներկայացրած զեկուցագրում գրել է. «Ունեցած հավաստի տեղեկություններով Ղամբարովի քարոզչական գործունեությունը որևէ կասկած չի հարուցում: Նրա ջանքերով Մոսկվայում տեղի հայ համայնքի ներկայացուցիչներից ձևավորվել է կոմիտե, որի կազմում, բացի Ղամբարովից մտնում է նաև Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ներսեսովը: Կոմիտեի հավաքները տեղի են ունենում Ղամբարովի ղեկավարությամբ, ով, անտարակույս, համարվում է Մոսկվայում հայկական շարժման գլխավոր ղեկավարը: Ղամբարովի անձնական նախաձեռնությամբ Մոսկվայում դրամական միջոցներ են հավաքվում հայկական գործի համար» [Императорский Московский университет 1755-1917, 2010, 144]: Ըստ Պ.Ա. Կապնիստի զեկուցագրի՝ Յ.Ս. Ղամբարյանի համախոհը համալսարանի իրավագիտության ֆակուլտետի խորհրդի քարտուղար, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր հայազգի Ներսես Օսիպի Ներսեսովն (1848-1894) էր [Волков, Куликова, Логинов, 2006, 173-174; Императорский Московский университет 1755-1917, 2010, 497-498]:

Մոսկվայի համալսարանից հեռացված Յ.Ս. Ղամբարյանը 1900 թ. մեկնել է Փարիզ, որտեղ սկզբնական շրջանում պարապմունքներ է անցկացրել Միջազգային դպրոցում, համագործակցել Մ.Մ. Կովալևսկու հետ: Արտասահմանում գտնված տարիներին Մ.Մ. Կովալևսկին «իրենից ներկայացնում էր ձգողականության ամենախոշոր կենտրոնը ինչպես ռուս վտարանդիության, այնպես էլ Ռուսաստանից եկած մարդկանց համար» [Ковалевский, 2005, 17]: Նա պատրաստ էր օգնության ձեռք մեկնել յուրաքանչյուր ռուս մարդու: Յ.Ս. Ղամբարյանի՝ արտասահման տեղափոխվելու մասին Մ.Մ. Կովալևսկին պրոֆեսոր Ա.Ի. Չուպրովին գրում էր. «Իմ բարեկամ պրոֆեսոր Ղամբարովը Մոսկվայի համալսարանում 25 տարի ծառայելուց հետո ընտանիքով տեղափոխվել է Փարիզ» [Ковалевский, 2005, 274]: Այժմ նա «ինձ հետ է . . ., հուսով եմ, որ կհաջողվի Ղամբարովին տեղավորել Բրյուսելում պրոֆեսոր՝ ռուսերենով դասախոսություն կարդալու իրավունքով և կստանա 5000 ֆրանկ» [ЦГИАМ. Ф.2244. Оп.1. Д.1706. Л.63-64]: Մ.Մ. Կովալևսկու աջակցությամբ Յ.Ս. Ղամբարյանը 1901 թ. պրոֆեսորի պաշտոնով քաղաքացիական իրավունք էր դասավանդում Բրյուսելի ազատ համալսարանում [ЦГИАМ. Ф.2244. Оп.1. Д.1706. Л.131-132]:

1901 թ. նոյեմբերի 14-ին Փարիզում Մ.Մ. Կովալևսկին և իր մերձավոր ընկերներներ, պրոֆեսորներ Ե. Վ. դե Ռոբերտիի ու Յ.Ս. Ղամբարյանի հետ ֆրանսիական

իշխանությունների թույլտվությամբ բացել են հասարակական գիտությունների ռուսական բարձրագույն դպրոց, որը գտնվում էր ֆրանսիական մասոնների հովանավորության ներքո: Այն պետք է քաղաքականությունից դուրս լիներ, հանդես չգար Ֆրանսիայի Հանրապետության դեմ և կղերականություն չքարոզեր: Յ.Ս. Ղամբարյանը դպրոցում մշտապես դասավանդող առաջատար պրոֆեսորներից մեկն էր: Նա դասավանդում էր երեք դասընթաց՝ «Քաղաքացիական իրավունքի հանրագիտարան», «Ժամանակակից իրավունքում անհատական և կոլեկտիվ աշխատանքային պայմանագիր» և «Պատմական ներածություն քաղաքացիական իրավունքի ուսումնասիրությունում» [Ковалевский, 2005, 713]:

Ռուսական դպրոցում, բացի հիմնադիրները, Մ.Մ. Կովալևսկու հրավերով դասախոսություններ էին կարդում նաև գիտական և քաղաքական տարբեր հայացքներ ունեցող ճանաչված դեմքեր Ս.Ա. Մուրոմցևը, Պ.Բ. Ստրուվեն, Մ.Մ. Վինավերը, Գ.Վ. Պլեխանովը, Վ. Ի. Լենինը, Վ.Վ. Չեռնովը, Վ. Կարեևը, Գ. Տարդը և ուրիշներ [Соловьев, 2007, 191; Курбатов, 2007, 289]: Դպրոցի ուսանողների թվում էր Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության լուսավորության ապագա ժողկոմ Ա.Վ. Լունաչարսկին, ով այդ տարիներին դարձել էր «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» օթյակներից մեկի անդամ [Курбатов, 2007, 289]:

Մ.Մ. Կովալևսկին իր ընկեր Ա.Ի. Չուպրովին 1903 թ. գրում էր, որ դպրոցի միակ խնդիրը պրոֆեսորների պակասն է, այդ պարագայում Յ.Ս. Ղամբարյանը ցավոք վատառողջ է, բուժվում է և միայն մեկ դասախոսություն է կարդում [Ковалевский, 2005, 512]: Դպրոցի հիմնադիրները գիտական ակտիվ գործունեություն էին ծավալում: 1904 թ. նրանք գիտական հոդվածների ժողովածու պատրաստեցին, որտեղ ընդգրկված էր նաև Յ.Ս. Ղամբարյանի հոդվածը, ով Մ.Մ. Կովալևսկու առաջարկությամբ միաժամանակ Մոսկվայում հրատարակության պատրաստվող ժողովածուի և գրադարանի չորս հրատարակիչներից մեկն էր [ЦГИАМ. Ф.2244. Оп.1. Д.1706. Л.101-104; Ф.2244. Оп.2. Д.131. Л.4.]:

Մ.Մ. Կովալևսկին Ֆրանսիայում ապրած տարիներին լավ հարաբերություններ էր հաստատել մի խումբ վտարանդի հայ երևելի դեմքերի հետ: Նիցցայում նա մտերմացել էր Ռուսաստանի նախկին ներքին գործերի նախարար Միքայել Տարիելի Լոռիս-Մելիքովի հետ, որի հեղինակած սահմանադրության մասին 1904 թ. Բեռլինում գրքույկ է հրատարակել [Ковалевский, 2005, 248-249]: Փարիզում նա նախագահել է մի քանի հայանպաստ ցույցերում, իսկ 1900 թ. հայության օգտին ելույթ է ունեցել Խաղաղության վեհաժողովում: Յ.Ս. Ղամբարյանից բացի, նա մտերիմ կապեր ուներ Փարիզում վտարանդիությունում գտնվող բժշկագիտության դոկտոր Իվան Զախարի Լոռիս-Մելիքովի (1862-1931) և ռուսական բարձրագույն դպրոցի պրոֆեսոր, կովկասագետ,

Միխայիլ [Միքայել] Իվանի Թամամշևի [Թամամշյան, 1852-1908] հետ, ում տանը հաճախ էր հյուրընկալվում [Армянский Вестник, 1916, 11, 21]: Մ.Մ. Կովալևսկու և Ե.Վ. դե Ռոբերտիի մտերմությունը կարևոր դեր խաղաց, որպեսզի նրանք ծանոթանան մասոնությանը և անդամագրվեն ռուսական «Կոսմոս» № 288 օթյակին:

Յ. Ս. Ղամբարյանի մասոնական գործունեությունը: Ռուսական «Կոսմոս» № 288 օթյակը հիմնվել է 1887 թ. հունիսի 25-ին, Փարիզում, որի հիմնադիրը և առաջին Գերհարգելի վարպետը ռուս գյուտարար Պավել Նիկոլաևիչ Յաբլոչկովն (1847-1894) էր [Карпачев, 2008, 482; Платонов, 2014, 244]: 1892 թ. դեկտեմբերից օթյակը չի գործել և վերսկսել է իր աշխատանքները միայն 1898 թ. դեկտեմբերի 15-ին, որի Վարպետ-տեղապահ է դարձել Մ. Մ. Կովալևսկին [Серков, 2001, 1205, 1207, 1210; Карпачев, 2008, 482; Платонов, 2014, 244]:

Ֆրանսիական «Սյուրտե ժեներալ» հատուկ ծառայության արխիվները վկայում են, որ Փարիզում գտնված տարիներին տեղի է ունեցել Յ. Ս. Ղամբարյանի առաջին առնչությունները և շփումները վտարանդի ռուս մասոնների հետ: 1905 թ. մայիսի 16-ին «Կոսմոս» № 288 օթյակում Մ.Մ. Կովալևսկու գլխավորությամբ Յ.Ս. Ղամբարյանը, Ի.Զ. Լոռիս-Մելիքովը և Մ.Ի. Թամամշևը ձեռնադրվել են առաջին աստիճանի մասոն [Берберова, 1986, 137; Платонов, 2014, 199, 215, 235; Карпачев, 2008, 122; Париж. Ложа Космос]: Կարճ ժամանակում նրանք այս օթյակում մասոնական աստիճանակարգի լուրջ առաջընթաց են ունեցել և 1906 թ. հունվարի 30-ին ձեռնադրվել են նախ՝ երկրորդ, ապա՝ երրորդ աստիճանի ազատ որմնադիր: Դա վկայում է օթյակում նրանց նկատմամբ եղած բարձր վստահության, անձն ու դերը գնահատելու մասին: 1906 թ. հունիսի 20-ին Յ.Ս. Ղամբարյանի և Ի.Զ. Լոռիս-Մելիքովի երաշխավորությամբ «Կոսմոս» օթյակի անդամ է դարձել ռուս վտարանդի պատմաբան, գրականագետ և քննադատ Եվգենի Վասիլևիչ Անիչկովը [Париж. Ложа Космос]:

1906 թ. Փարիզի հասարակական գիտությունների ռուսական բարձրագույն դպրոցի փակվելուց հետո, տարվա երկրորդ կեսին, Յ.Ս. Ղամբարյանը վերադարձել է Ռուսաստան և զբաղեցրել Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացիական իրավունքի պրոֆեսորի պաշտոնը: Փարիզից բացակայելու պատճառով նա 1907 թ. «Կոսմոս» օթյակի գործունեությանը չի մասնակցել, բայց մինչև 1908 թ. շարունակել է մնալ օթյակի անդամ [Париж. Ложа Космос]:

1915 թ. Պետերբուրգ վերադարձած Մ.Մ. Կովալևսկին բավական հանրաճանաչ գիտնականի համբավ ուներ, որը պայմանավորված էր նրա «հսկայական խորագիտակությամբ, համարձակ, անկախ բնավորությամբ, անձնական բացառիկ հմայքով և մարդկային բարձր որակներով, մարդկանց հետ շփվելու աներևակայելի շնորհով» [Ковалевский, 2005, 10]: Կարճ ժամանակում նա դարձավ «կենտրոն, որին

ձգտում էին տարբեր դիրքի, համոզմունքների ու մասնագիտության տեր մարդիկ» [Ковалевский, 2005, 50]: Մ.Մ. Կովալևսկին «կատարյալ բացառիկ բարոյական կերպար էր» [М.М.Ковалевский. Ученный … , 1917, 51], որի մարդկային ու ընկերական բարձր որակների մասին վկայում է հետևյալ փաստը: 1906 թ. վերջին ռուսական իշխանությունները պատրաստվում էին Յ.Ս. Ղամբարյանի բարեկամներից մեկին աքսորել Տրուխանովսկի երկրամաս, ով մեղադրվում էր Մոսկվայում ապստամբության օրերին թռուցիկներ տարածելու մեջ: Մ.Մ. Կովալևսկու միջնորդությամբ ոստիկանության դեպարտամենտի ադմինիստրատոր, պետական խորհրդական Մ.Ի Տրաչկովսկին Յ.Ս. Ղամբարյանի բարեկամին աքսորի փոխարեն ուղարկեց արտասահման՝ կրթությունը շարունակելու [Ковалевский, 2005, 381]:

Ռուսական հեղափոխության օրերին ծայրահեղ քաղաքականացած հասարակությունը ձգտում էր ստանալ կյանքի վերակառուցման գործնական դեղատոմսեր, տեսնել սոցիալական արդարություն և մարդասիրական քայլեր: Այս պայմաններում Մ.Մ. Կովալևսկին իր ընկերներ և համախոհներ, «Կոսմոս» օթյակի անդամներ Յ.Ս. Ղամբարյանի, Ի.Զ. Լորիս Մելիքովի և Ե.Վ. դե Ռոբերտի հետ, ովքեր 1906 թ. վերադարձել էին Ռուսաստան, ձեռնամուխ եղավ մասոնության գաղափարների տարածմանն ու օթյակների կազմավորմանը: Չնայած ռուսական լիբերալների շրջանում մասոնության մասին եղած նախապաշարումներին, Մ.Մ. Կովալևսկին կարողացավ ազատ որմնադիրների շարքերում ընդգրկել ոչ միայն մտավորականությանը, որը պատրաստ էր օթյակում լուսավորչական աշխատանք տանել, այլև քաղաքական-հասարակական մի խումբ գործիչների: Նրանցից ոմանք մասոն դարձան «բացառապես Մ. Մ. Կովալևսկու հմայքի պատճառով, ով հսկայական հեղինակություն էր վայելում ռուսական և արտասահմանյան շրջանակներում, որի ետևից կարելի էր գնալ ամեն տեղ, որտեղ նա կկանչեր» [Серков, 1997, 62]:

Յ.Ս. Ղամբարյանի մասոնական գործունեությունը ինչպես Փարիզում, այնպես էլ Ռուսաստանում անխզելիորեն կապված է Մ.Մ. Կովալևսկու հետ: Վերջինս «Ֆրանսիայի Մեծ Արևելք Օթյակից» ստացել էր օթյակի տեղապահ վարպետի աստիճան և Ռուսաստանում մասոնական օթյակներ հիմնելու իրավունք: Մ.Մ. Կովալևսկին իրավամբ համարվում է XX դարի սկզբում Ռուսաստանում քաղաքական մասոնության տարածման գլխավոր դեմքը, իսկ Յ.Ս. Ղամբարյանը՝ նրա աջակիցը, գաղափարակիցը, համախոհը և գործընկերը:

1906 թ. փետրվարի 18-ին Մ.Մ. Կովալևսկին Պետերբուրգում հիմնել է «Страна» ամենօրյա հասարակական-քաղաքական թերթ, որի խմբագրական խորհրդի անդամ դարձան նրա մտերիմ ընկերներ Յ.Ս. Ղամբարյանը, Ի.Ի. Իվանյուկովը և Դեմոկրատական բարեփոխումներ կուսակցության ղեկավարներից գրող, պատվավոր

ակադեմիկոս Կ.Կ. Արսենևը [Ковалевский, 2005, 347]: Ապրիլի 27-ին Մ.Մ. Կովալևսկին «Страна» թերթի խմբագրությունում, որպես Փարիզի «Կոսմոս» № 288 և «Հավատարիմ բարեկամներ» օթյակների Վարպետ-տեղապահ, Ե.Ի. Կեդրինի երաշխավորությամբ մասոն է ձեռնադրել հայազգի իշխան, կադետների կուսակցության անդամ Դավիթ Օսիպի Բեբութովին (1859-1923), ով հետագայում էական դեր խաղած Ռուսաստանում քաղաքական մասոնության տարածման գործում:

1906 թ. նոյեմբերի 15-ին Պետերբուրգում Մ.Մ. Կովալևսկու նախաձեռնությամբ հիմնվել է ռուսական քաղաքական մասոնության առաջին օթյակը՝ «Բևեռային աստղը»: Օթյակի առաջին անդամներն էին պետերբուրգյան մտավորականության ներկայացուցիչներ պրոֆեսոր Ա.Կ. Բորոզդինը, փաստաբաններ Վ.Ա. Մակլակովը, ճարտարապետ Պ.Մ. Մակարովը, գնդապետ Վ.Վ Տեպլովը, պատմաբան Ն.Պ. Պավլով-Սիլվանսկին, կոմս Ա.Ա. Օռլով-Դավիդովը և ուրիշներ: Նրանց մեծ մասը կադետների կուսակցության անդամ էր [Аврех, 1990, 50; Курбатов, 2007, 290]: «Բևեռային Աստղ» օթյակի պաշտոնական գրանցումը տեղի է ունեցել «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» օթյակի արտոնագրով, որը շնորհվել է 1908 թ. մայիսի 9 (22)-ին: Օթյակն այդ պահին ունեցել է 13 անդամ [Аврех, 1990, 51]: Օթյակի հիմնադիրներից Մ. Մ. Կովալևսկին, Ե.Վ. Անիչկովը և Ի.Զ. Լոռիս-Մելիքովը միաժամանակ «Ֆրանսիայի Մեծ Արևելք Օթյակի» միության անդամներ էին [Берберова, 1986, 137; Соловьев, 2007, 208-210; Серков, 2001, 290-291; Петербург. Ложа Полярная звезда]: 1907 թ. «Բևեռային աստղ» օթյակին անդամագրվել է նաև Յ.Ս. Ղամբարյանը [Николаевский, 1990, 129-130; Платонов, 2014, 199; Карпачев, 2008, 122; Петербург. Ложа Полярная звезда]:

Օթյակի անդամներն իրենց քաղաքական հայացքներով ներկայացնում էին ռուսական լիբերալ մտավորականության ընտրանին: Նրանք «քիչ էին ձգտում բարոյական կատարելագործման, ավելի շատ հանդես էին գալիս ընդդեմ ցարական ինքնակալության» [Соловьев, 2007, 209]: Օթյակի նշանն իրենից ներկայացրել է շրջան, որի երկայնքով գրված էր. «Սանկտ Պետերբուրգի Բևեռային աստղ 1908»: Շրջանի կենտրոնում պատկերված էր իննաթև աստղ, ճյուղեր, խաչվող անկյունակ, կարկին և լուսափայլ: «Բևեռային աստղ» օթյակն ընդհանուր առմամբ ունեցել է 58 անդամ: Օթյակի նիստերը կայացել են կոմս Ա.Ա. Օռլով-Դավիդովի բնակարանում և Դ.Օ. Բեբութովի առանձնատանը, որի երկրորդ հարկը ծառայում էր որպես օթյակի ժողովարան: 1910 թ. փետրվարին մասոնական օթյակների արտակարգ ժողովն, անհանգստանալով Դ.Օ. Բեբութովի օրեցօր աճող հեղինակությունից, կասեցրել է «Բևեռային աստղ» օթյակի գործունեությունը [Николаевский, 1990, 129-130; Берберова, 1986, 112; Соловьев, 2007, 208-210; Курбатов, 2007, 290]:

1906 թ. Պետերբուրգում Մ.Մ. Կովալևսկու նախաձեռնությամբ հիմնվել է «Ֆենիքս» օթյակը: Այն գործել է «Ֆրանսիայի Մեծ Օթյակի» հետ համագործակցած, ղեկավարվել է Հնագույն և Ընդունված Շոտլանդական Կանոնադրությամբ: Օթյակի Գերհարգելի Վարպետը Մ.Մ. Կովալևսկին էր, իսկ հիմնադիր 5 անդամներից մեկը Յ.Ս. Ղամբարյանը [Петербург, Ложа Феникс]:

1906 թ. հունվարի 11-ին Մ.Մ. Կովալևսկին դիմել է «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» խորհրդի նախագահ Ֆ. Դեսմոնին՝ Մոսկվայում օթյակ հիմնելու խնդրանքով և 1906 թ. նոյեմբերի 15-ին ստացել համապատասխան արտոնագիր՝ Մոսկվայում «Վերածնունդ» օթյակ հիմնելու համար: 1908 թ. փետրվարի 17-ին, Մոսկվայում «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» անդամներ, բարձրաստիճան մասոններ Գաստոն Բուշեի և Բետրան Սենշոլի մասնակցությամբ հիմնվել է «Վերածնունդ» օթյակը: Օթյակի հիմնադրման մասին արձանագրությունում գրված է. «Ներկա գտնվողների միջև կարծիքների քննարկումից հետո որոշվեց Մոսկվայի արևելքում հիմնել ֆրանսիական համակարգի օթյակ Ֆրանսիայի Մեծ Արևելքի հովանու ներքո Վերածնունդ անվանումով»: Արձանագրությունը ստորագրել են օթյակի հիմնադիր անդամներ Մ.Մ. Կովալևսկին, Ե.Դ. դե Ռոբերտին, Յ.Ս. Ղամբարյանը Ն.Ն. Բաժենովը, Ս. Կոտլյարևսկին, Վ.Ա. Մակլակովը, Վ.Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն, Ե.Վ. Անիչկովը և Ի.Զ. Լոռիս-Մելիքովը: Որոշ ժամանակ անց նրանց միացել է նաև նաև Դ.Օ. Բեբութովը [Берберова, 1986, 112, 113; Соловьев, 2007, 207; Курбатов, 2007, 291-292; Аврех, 1990, 50-54; Москва. Ложа Возрождение]: Օթյակի նշանը ներկայացրել է կրակից վեր հառնող ֆենիքս (փյունիկ) թռչուն՝պատկերված եռանկյան մեջ, որը ներառված է շրջանում: Եռանկյան անկյուններում ֆրանսերենով տեղադրված է միություն անվանման սկզբնատառերը: Եռանկյան և շրջանի միջև ռուսերենով գրված է օթյակի անվանումը: Ֆենիքսի պատկերի տակ նշած է օթյակի հիմնադրման տարին: «Վերածնունդ» օթյակն ունեցել է 25 անդամ և գործել է մինչև 1910-1911թթ.:

1908 թ. մայիսի 8-ին Մ.Մ. Կովալևսկու բնակարանում կայացել է ռուս մասոնների ընդհանուր ժողով, որտեղ նա իր համախոհներ Յ.Ս. Ղամբարյանի, Ե.Վ. Անիչկովի և Ե.Վ. դե Ռոբերտիի հետ գաղափարական տարաձայնություններ ունենալով 1908 թ. հունվարի Մոսկվայում հիմնված «Ազատագրում» օթյակի ղեկավարների հետ, լքել են «Բևեռային աստղ» օթյակը և հիմնել սեփական «Կոսմոս» օթյակը [Николаевский, 1990, 151; Курбатов, 2007, 291]: «Բևեռային աստղ» օթյակից հեռանալուց հետո Մ.Մ. Կովալևսկին, Ե.Դ. դե Ռոբերտին, Ի.Զ. Լորիս-Մելիքովը և Յ.Ս. Ղամբարյանը դադարել են էական դեր խաղալ ռուսական քաղաքական մասոնությունում:

1912 թ. ամռանը Մոսկվայում կայացած համաժողովում ռուս քաղաքական մասոնները ստեղծել են նոր կազմակերպություն՝ «Ռուսաստանի ժողովուրդների Մեծ

Արևելք», որի գլխավոր քարտուղար է ընտրվել Ն.Վ. Նեկրասովը: Կազմակերպությունում ակտիվ դեր էին խաղում կադետների կուսակցության անդամները և մեծ թվով ստեղծագործական ու գիտական մտավորականներ: Այս կազմակերպության անդամ են դարձել Յ.Ս. Ղամբարյանը և նավթարդյունաբերող Ստեփան Գևորգի Լիանոզովը (Լիանոսյան) [Карпачев, 2008, 122, 239; Курбатов, 2007, 284-288, 291-293; Соловьев, 2007, 263-264]: Սա ռուսական մասոնական վերջին կազմակերպությունն էր, որին անդամագրվել է Յ.Ս. Ղամբարյանը:

Մասոնության քաղաքականացման և կուսակցականացման տարիներին Յ.Ս. Ղամբարյանը մասոնական ակտիվ գործունեություն չի ծավալել: Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ նա որևէ կուսակցության անդամ չի եղել և քաղաքականությամբ չի զբաղվել: Ոստիկանության դեպարտամենտի տնօրեն Ա.Ա. Լոպուխինը նրա քաղաքականացված լինելու մասին Մ.Մ. Կովալևսկուն ասում էր. «Ղամբարովը քաղաքական հարաբերություններում վտանգավոր չէ, բայց ապաշնորհ է» [ЦГИАМ. Ф.2244. Оп.1. Д.1706. Л.82-85]:

Հետագա տարիներին Յ.Ս. Ղամբարյանը զբաղվել է բացառապես գիտական և պրոֆեսորա-դասախոսական գործունեությամբ: 1916 թ. նա մասնակցել է Մոսկվայում լույս տեսնող «Армянский вестник» ամսագրի հրատարակմանը, 1917 թ. դասավանդել է Թիֆլիսի Վրացական ազգային համալսարանում: 1919 թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը որոշում կայացրեց Երևանում համալսարան բացելու մասին [ՀՀ պառլամենտական օրենքները 1918-1920 թթ., վ. 190, էջ 77], իսկ հուլիսի 8-ի որոշմամբ Յ.Ս. Ղամբարյանը նշանակվել է նոր հիմնադրվող համալսարանի կազմակերպիչ (ռեկտոր) [ՀՀ պառլամենտական օրենքները 1918-1920 թ., վ . 325, էջ 130]: 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցի շենքում համալսարանի հանդիսավոր բացմանը Յ.Ս. Ղամբարյանը հանդես է եկել հակիրճ, բայց շատ տպավորիչ ու խիստ բովանդակալից խոսքով: Նա ոչ թե տոնական ողջույն է հղել հանդիսության ներկաներին, այլ ներկայացրել է համալսարանի դերի ու կոչման մասին իր տեսլականը: Նա հիշեցրել է, որ հայկական համալսարանի բացման օրը համընկնում է Մոսկվայի համալսարանի բացման օրվան և «մեր իրական անկախության ճանաչմանը»: Դա «ոչ թե պատահականություն է, այլ նախախնամությամբ սահմանված բախտավոր խորհուրդ, որովհետև Մոսկվայի համալսարանը հսկայական դեր է կատարել հայության կրթության և լուսավորության գործում»: Ընդգծելով համալսարանի կարևորությունը հայության կյանքում, նա իր խոսքն ավարտել է մասոնական գաղափարախոսության ոգով .«Կեցցե ուրեմն մեր համալսարանը, ոչ միապետական, ոչ եկեղեցական, ոչ արիստոկրատական, այլ ազատ, աշխարհիկ և դեմոկրատիկ համալսարանը, որ կոչված է մշակելու հավասարապես գիտությունը և առաքինությունը, առանց որոնց դեմոկրատիան

կամ խաբեություն կլիներ, կամ դատարկ հնչյուն» [Հայաստանի համալսարան, 31.01.1919; Երևանի համալսարան. 1918-1920 թթ., 1995, վ. 103, էջ 158-159]:

1920 թ. դեկտեմբերին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, նոր իշխանություններն ըստ արժանվույն չգնահատեցին Յ.Ս. Ղամբարյանի նման համբավավոր գիտնականի, մտավորականի, կրթության ու գիտության լավագույն կազմակերպչի կարողությունները: Այս պայմաններում փոխվեց վերաբերմունքը համալսարանի ռեկտորի և աշխատակազմի նկատմամբ, որոնք աշխատանքից ազատվեցին: Յ.Ս. Ղամբարյանը հարկադրված էր տեղափոխվել իր ծննդավայր Թիֆլիս և որոշ ժամանակ դասավանդել Վրացական ազգային համալսարանում, այնուհետև Պետերբուրգում և Մոսկվայում, որտեղ և կնքեց իր մահկանացուն:

Եզրակացություն: ԵՊՀ առաջին ռեկտոր Յ.Ս. Ղամբարյանը Ռուսաստանում քաղաքական մասոնության հիմնադիր Մ.Մ. Կովալևսկու մերձավոր համախոհներից մեկն էր և որոշակի դեր է խաղացել Պետերբուրգում և Մոսկվայում ռուսական մասոնական մի քանի օթյակների հիմնադրման գործում: Նրա մասոնական գործունեությունը հիմնարար ուսումնասիրության կարիք ունի:

Գրականության ցանկ

Yerevani hamalsaran. 1918-1920 t't'. Vaveragreri zhoghovatsu, kazmets'in F. H. Mamikonyan, S. S. Mirzoyan, Yerevan, YePH hrat., 1995, 335 ej. **(in Armenian)**

Hayastani Hanrapetut'yan parrlamentakan orenk'nery 1918-1920 t't'., Yerevan, Azgayin zhoghov, 1998, 506 ej. **(in Armenian)**

«Hayastani hamalsaran», Alek'sandrapol, 1919, 31 hunvari. **(in Armenian)**

TSGIAM. F.2244. Op.1. D.1706. L.101-104, F.2244. Op.2. D.131. L.4. **(in Russian)**

TSGIAM. F.2244. Op.1. D.1706. L.131-132. **(in Russian)**

TSGIAM. F.2244. Op.1. D.1706. L.21-22. **(in Russian)**

TSGIAM. F.2244. Op.1. D.1706. L.63-64. **(in Russian)**

TSGIAM. F.2244. Op.1. D.1706. L.82-85. **(in Russian)**

Avrekh 1990 - Avrekh A.YA. Masony i revolyutsiya. Moskva, Izd-vo Politizdat, 1990, 350 s. «Armyanskiy Vestnik». Moskva, 1916, № 11, s. 21. **(in Russian)**

Berberova 1986 - Berberova N. Lyudi i lozhi. Russkiye masony XX stoletiya, N'yu-York, Russica publishers, 1986, 299 s. **(in Russian)**

Volkov, Kulikova, Loginov – 2006 Volkov V.A., Kulikova M.V., Loginov M.V. Moskovskiye professora XVIII - nachala XX vekov. Gumanitarnyye i obshchestvennyye nauki, Moskva, Yanus-K, Moskovskiye uchebniki i kartografiya, 2006, 299 s. **(in Russian)**

Imperatorskiy Moskovskiy universitet 1755-1917. Entsiklopedicheskiy slovar'. Sost. A.YU. Andreyev, D.A.Tsygankov. Moskva, Rossiyskaya politicheskaya entsiklopediya, 2010, 894 s. **(in Russian)**

Karpachev 2008 - Karpachev S. P. Masony. Slovar', Moskva, Izd-vo AST, Olimp, 2008. 634 s. **(in Russian)**

Kovalevskiy 2005 - Kovalevskiy M.M. Moya zhizn'. Vospominaniya. Moskva, ROSSPEN, 2005, 784 s. **(in Russian)**

Kurbatov 2007 - Kurbatov V. I. Taynoye obshchestvo masonov. Moskva, Izd-vo Eksmo, 2007, 416 s. **(in Russian)**

M. M. Kovalevskiy. Uchennyy, gosudarstvennyy i obshchestvennyy deyatel' i grazhdanin: Sbornik statey. Peterburg, Izd-vo Artist: zavedeniye t-va A.F. Marks, 1917. 274 s. **(in Russian)**

Nikolayevskiy 1990 - Nikolayevskiy B. I. Russkiye masony i revolyutsiya. Moskva, Izd-vo Terra, 1990, 208 s. **(in Russian)**

Platonov 2014 - Platonov O. A. Masony v russkoy istorii XIX veka, Moskva, Izd-vo Rodnaya strana, 2014, 384 s. **(in Russian)**

Svatikov 1917 - Svatikov S.G. Opal'naya professura 80-ikh godov.-«Golos minuvshego». Moskva, 1917, № 2, Tip. T-va Ryabushinskikh, ss. 5-78. **(in Russian)**

Serkov 1997 - Serkov A. I. Istoriya russkogo masonstva, SPb, Izd-vo imeni N. I. Novikova, 1997, 400 s. **(in Russian)**

Serkov 2001 - Serkov A. I. Russkoye masonstvo 1731-2000, Moskva, Izd-vo Rossiyskaya politicheskaya entsiklopediya, 2001, 1224 s. Solov'yev 2007 - Solov'yev O. F. Russkiye masony. Moskva, Izd-vo Eksmo, 2007, 544 s. **(in Russian)**

Spisok grazhdanskim chinam 4-ogo klassa. Ispravleno po 1-ye iyulya 1863. Sankt-Peterburg, tip. Pravitel'stvuyushchego senata, 1863, 956 s. **(in Russian)**

Lozha Polyarnaya zvezda. samisdat.com/5/23/523r-pzv.htm **(in Russian)**

Moskva. Lozha Vozrozhdeniye. http://samisdat.com/5/23/523r-voz.htm. **(in Russian)**

Parizh. Lozha Kosmos. http://samisdat.com/5/23/523f-kos.htm **(in Russian)**

Peterburg, Lozha Feniks. samisdat.com/5/23/523r-fen.htm. **(in Russian)**

Peterburg. Lozha Polyarnaya zvezda. samisdat.com/5/23/523r-pzv.htm. **(in Russian)**